

ԽՈՐԵՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. Շինուհան

ԽԵԶԴԵՍ ԳՐԵԼ
Ծաղկական թագավորություն



ԿՈԼՏԵՏԵՄԱՅԻՆ և ՔՐԻԳԱԴՎՅԻՆ
ԴԱՏԻ ԹԵՐԱԲ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ-
ՀԵՌԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԱՅԱԿԱՆ
ՀԱՅՈՒ ԺԿԻՆ

ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԵՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1939
ՅԵՐԵՎԱՆ

U. TESSER

ОВЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ
ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈԼՏՆՏԵՄԱՅԻՆ ՅԵՎ
ԲԲԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ
ԹԵՐԹԵՐԻ ԽՄՐՄԴԻՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԵՐԱՑՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ—ՃԿԿ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ՅԵՐԵՎԱՆ 1939 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչու վոչ բոլոր թղթակցություններն են ավում	3—4
2. Գրել ճշմարտացի	4—5
3. Ճիշտ ընարել թեմաները	6—10
4. Ուսումնասիրել նյութերը, աշխատել նը- րանց վրա	10—12
5. Ինչոյ դրել	12—14
6. Ինչպես հավաքել նյութը	14—18
7. Գյուղթղթակցի հուշատեսքը	18—19
8. Թղթակցության պլանը	19—22
9. Թղթակցության մեջ չթողնել մութ տեղեր .	22—25
10. Ընդդեմ սխալ ընդհանրացումների	25—27
11. Քննազատել բարեխղճորեն	27—29
12. Իմաստակություն չանել, գրել պարզ	29—
13. Կրկին անդամ ռառողել ամեն ինչ	29—
14. Պայքարել դործունության համար	30—32

ԴԼԱՂՄԱՔԻ ՄԱՍԻՆ Տ—1663 Պատ. №154. Տիրաժ 1500

Հանձնված և արտադրության 13-ը փետրվարի 1939 թ.

Ստորագրված և տպագրված 1939 թ.

Հայկական ԽՍՀ Ժողկովնարեն իրատարակչության «Խորհրդային»
Հայաստանի տպարան, Ցերելան

11-28356 գր

Ա. ՇԵՖՏԵԼ

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉՈՒ ՎՈՉ ԲՈԼՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՏՊՎՈՒՄ

Խորհրդակցություններում, հավաքներում, ընկերական զր-
րաւյցների ժամանակ գյուղթղթակցները հաճախ գանդատվում
են տպագիր և պատի թերթերի խմբագիրներից:

—Գրում ենք, գրում,— ասում են նրանք,— իսկ թերթում
մեր թղթակցությունները չենք տեսնում...

Անձինք յե, վոր վորոշ խմբագրություններում դեռևս
կան տյապիսի մարդիկ, վորոնք անբարեխղճորեն են վերա-
բերվում գեղի թղթակցությունները, չեն կատարում կոմունիո-
ական կուսակցության ցուցումները՝ բանթղթակցների և գյուղ
թղթակցների նկամամբ ուշագիր լինելու մասին։ Այդպիսի
մարդկանց զեմ պետք է պայքարել, նրանց անհրաժեշտ է քննա-
դատել, մերկացնել։

Բայց այսուամենայնիվ խմբագրությունների մեջ մասը հա-
ճույքով տպագրում ե գյուղթղթակցների թղթակցությունները։
Հաճախ պատահում ե, վոր թղթակցությունները չեն տպագրվում
վոչ թե խմբագրության հանցանքով, այլ այդ թղթակցություն-
ների հեղինակների հանցանքով։ Յեթե թղթակցությունը դրված
է անհամոզեցուցիչ, առանց փաստերի կամ պարզապես անհե-
տաքրքիր, — նշանակում ե գյուղթղթակցը նրա վրա քիչ է աշ-
խատել, կամ թե չի աշխատել այնպես, ինչպես հարկն ե։

Ցերելեմ առիթ ե լինում գյուղթղթակցներից լոել նաև
այսպիսի գանդատներ, թե ահա տեսնում եք, «առաջ իմ թղթակ-
ցությունները տպագրում եյին շատ հաճույքով, իսկ հետո հան-
կարծ չկիտեք թե ինչու գալարեցին տպագրել»։ Բայց հաճախ
գուրու ե գալիս, վոր այսուել ևս բանն ամենեվին ել խմբագրության
չար կամքի մեջ չե։ Խմբագրությունը գտպարել է տպագրել նրա
թղթակցությունները չենց այն ժամանակվանից, յերբ գյուղթղ-

Թակեցը մի քանի անգամ խարել և թերթին, չոտուգված տեղե-
կություններ հաղորդելով։ Այդ, ի հարկեր, միտնամայն ան-
փուլատրելի յէ և դյուղթղթակեցին անվայել։

Գետք ե զրել այնպես, վոր թղթակցության համար ընթեր-
ցողների առաջ սախզված շինի կարմրել վոչ խմբագրությունը,
վոչ ել ինքը՝ դյուղթղթակեցը։

Ի՞նչ է հարկավոր գրա համար։

ԳՐԵԼ ՃՇՄԱՐՏԱՅԻ

Յուրաքանչյուր ներկայացվող թղթակցության առաջին ու
հիմնական պահանջն եւ ճշմարտացիությունը։ Թղթակցությու-
նը պետք է ինին ճշմարիտ՝ սկզբից մինչև վերջը։

Խսկական, ապնիվ դյուղթղթակեցը յերեք իր թղթակցության
մեջ թույլ չի առ կասկուելի, իսկ ասավելու՝ վոչ ճիշտ, իրա-
կանությանը բացահայտուեն չհամապատասխանող, զրապարիչ
բնույթի վորեւ բան։ Նա զբարարություններ չի բարգի անմեղ
մարդու վրա, անձնական նկատառումներով չի պաշտպանի հան-
ցալորին։ Նա չի գովարանի այն, ինչ հարկավոր չե դաշել, չի
արդարացնի խարերային, ժողովրդի թշնամուն։

Յուրաքանչյուր դյուղթղթակեց պետք է այնպիս աշխատի
թղթակցության վրա, վորպեսզի վոչ մի բանում շխարի ընթեր-
ցողին— վո՞չ գիտավորյալ կերպով, վո՞չ անփութության հե-
տեվանքով, և վո՞չ սիստմամբ։ Մամուլում բաց թողնված սիսա-
լը— ամենածանր և զժվար ուղղելի սիստմերից մեկն է։ Այն
ամենուրեք արատավորում և ապնիվ մարդկանց բարի անունը,
վորոնց ամենեվին ել չի մխիթարում այն հանդամնքը, վոր
նրանց զրպարտել են վոչ թե գիտավորյալ կերպով, այլ սիստ-
մամբ։ Այս բանը վորու դյուղթղթակեցներ, դժբախտաբար, դեռ
չեն հասկանում։

Որինակ, դյուղթղթակեց Զերեվատին ըրջանային «Ասուլի-
նեց» թերթում (Կրասնոդարի յերկրամաս, Վիսելկովսկի շրջան)
գրել եր թե «Ելեկտրոսիլար» կողմնական նախագահն ապօրինի
կերպով մրցանակ և տվել իր բարեկամին—բրիգադիր կրոխմա-
լիկին։ Մինչդեռ իրականում կրօխմալեկը պարզեվարված և
յեղել կոլտնականների ընդհանուր ժողովի վրոշմամբ։
Դյուղթղթակեցը պարզապես տեղեկություն չի ունեցել այդ վո-
րոշման մասին։ Իսկ նա պետք է տեղյակ լիներ, յեթե վորոշել

եր դրել այդ մասին։ Նա պետք է ոտուգեր բոլոր հանդամանք-
ները, իմանար թե բանն ինչուկն է յեղել։

Վերցնենք մեկ այլ դեպք։ Դյուղթղթակեց կարմանովը ձբր-
ջանային «Բելգորոդսկայա պրավդա» թերթի խմբագրությունը
(Կուրսկի մարզ) հաղորդել եր թե այն կողմնական դեկա-
վարները, վորի մեջ ինքն աշխատում է, խարզակի ճանապարհով
իրենց միս են մասակարարում ի հաշվով մյուս կոլտնական-
ների։ Այդ թղթակցությունը տպվել եր, իսկ սառուցման ժամա-
նակի պարզեց վոր կոլտնական գեկավարները վոչ մի տե-
սակի ինքնամասակարարմաբ չեն զբաղվել։ Կոլտնական գեկա-
վարչությունն ամբողջ ըրջանով մեկ խարտառակեց, ասանց
վորեւ հիմքի։ Դյուղթղթակեցը դրել եր չոտուղած խոսակ-
ցությունների հիման վրա։

Թղթակցությունը գրել չոտուղած խոսակցություններով,
միս ին այն բանի հիման վրա, թե ինչ վոր մեկը ինչ վոր մեկին
ինչ վոր բան է փափացել, միանդաման անթույլարելի յէ։
Դյուղթղթակեցը պետք է զրի միայն այն մասին, ինչ վոր ինքն
անձամբ դժուե, ինչ բանում վոր ինքը հավաստիացել է, ինչ
բանի ճշտության մեջ վոր ինքը հաստատապես համողված է։

Յերբ դյուղթղթակեցը գրում է խոսակցությունների հիման
վրա, յերբ նա ինքը չի սուուգում լուծքը, նրա թղթակցությունն
ամենից բացի նաև անհամոզեցուցիչ է։ Այս, որինակ, բա-
ցահայտուեն խասակցությունների հիման վրա զրպած և յեղել
մի թղթակցություն, վորը դյուղթղթակեց կինելովսկու կողմից
ուղարկվել եր ըրջանային «Ռւդարնայա բրիգադա» թերթի խըմ-
բարբությանը (Վոլոդույի մարզ, Զերամարսկի շրջան)։

«ՀԱՅԻ ԾԵԶ ԹԵԼ ՅԵՎ ՇՊԱԶԱՑ»

Հաճախ կարելի յէ կոլտնականներից լսել, վոր կինելովս-
կի դյուղթղթակցությունն են վասուրակ հաց։ Հացի մեջ հաճախ
կարելի յէ գտնել թել, շպազատ և ափազ։

Դա հետեւանք է այն բանի, վոր հաճախ փուռն են մտնում
կողմնակի մարդիկ և իրենց հետ բերում կեղտ, իսկ հացթուխ-
ներն ալյուրը չեն մաղում։ Ավագ հացթուխ Սոկոլովան հացը
փոփչ հանում է կիսայինի, «անտեսման» նպատակով։

Դյուղթղթակցի նախագահ Ռևանովը սակավ է այցելում փուռ։
Փոք աշխատողների մեջ չի զգացվում վորեւ պատասխանավու-
թյուն նրանց հանձնարարված զործի համար։

և հարկավոր ավելի գրել-վասի մասին, թէ՞ լավի մասին։ Այդ սխալ հարց ե, այդպիսի սահմանադում չպետք է լինի։ Գրել հարկավոր և նրա մասին, ինչ վոր ներկայումս ըստ կարծիքով ամենից ավելի կարեվոր է։ Իսկ ամենակարեվորը միշտ այն է, վոր թղթակիցը լայտույն ծառայություն մատուցի կոլտնտեսայինին գործին։

Յեթե դյուղթղթակիցը տեսնում է վորեվե անկարգություն, չարաշահում, անհույթ վերաբերմունք դեպի կոլտնտեսային բարիքը կամ անբարեխորդ աշխատանք, նա իրավունք չունի չղեկելու այլ բոլորի մասին։ չէ՞ վոր նրա նշած անկարգությունները վերացնելով միայն կոլտնտեսությունը կկարողանա ինչպես հարկն և ամել և դարգանալ։

Յեթե դյուղթղթակիցը տեսնում է, վոր վորեվե մեկը լավ և աշխատում, վոր նրա բրիգազում կամ առհասարակ կոլտնտեսության մեջ կա ինչ վոր նոր բան, վորն արժանի յև ընդորինակման, նա պետք է պիտի նաև այլ մասին։ Յեզ այդ կծառայի հողուու ընդհանուր զործի, կիրախուսի լավագույներին, միացածների մեջ ցանկություն կառաջացնի աշխատելու նույնպես բավի, բոլոր կոլտնտեսականներին հնարավորություն կոտ ընդորինակելու առաջափոների փորձը։

Յուրաքանչյուր դյուղթղթակիցի առջև կան բազմաթիվ լավ, չետաքքիր և կարեւոր թեմաներ։ Իգուր չեր պրոլետարական մեծ դրող Ալեքսանդր Մաքսիմովիչ Գորկին մասնանշում, թէ դյուղթղթակիցների թղթակցությունների մեջ պետք է արտացոլեն «աշխատավոր մասայի բոլոր տապնապներն ու հրճվանքները, բոլոր սխալներն ու հաջողությունները, բոլոր կուլտուրական պահնջները, նրա մեջ յեղած միավորների բոլոր չեղումները դեպի հին խամճն ու աղբը, վորը դեռ այնքան շատ և և մարդու մեջ, և նրա շուրջը» (Ա. Մ. Գորկու՝ «Բնդդեմ նեղմատության և պեսսիմիզմ» նամակից, 1928 թ.)։

Ի՞նչն է լավ — իր թղթակցությունների համար թեմաներն ընտրել ինքնուրույն կերպով, թէ՞ սպասել մինչև վոր թեման կասալարիի խմբագրությունը։

Ի հարկե, յեթե խմբագրությունն առաջարկում է հետաքրքիր թեմա, վորը դյուղթղթակիցը կարող է լուսաբանել բովածականաչափ դիտենալով գործը, դրանից չպետք է հրաժարվել։ Քայլ իբրև կանոն, դյուղթղթակիցը չպետք է միշտ սպասի այդպիսի առաջադրանքի։ Յեթե նա թեման ընտրում է ինքը, յեթե

այդ թեման, ինչպես առում են, նրա սրատվն ե, առաջ բարեխըլ ճորման աշխատելով, նա կորի լավ թղթակցություն։ Իսկ ամենագլխավորն այն է, վոր գյուղթղթակիցը գտնվելով կոլտնտեսային կյանքի բուն խորքում, շատ զետքերում կկարսդանա առաջարկել այնպիսի կարեւոր հրատապ թեմաներ, վորոնց մասին ինքը՝ խմբագրությունը գուցե մտքան ել չի անցկացրել։

Յերբ թեման ընտրված է, հարկավոր է այն ձշուել։ Պարզաբնենք այլ որինակով։

Յենթագրենք դյուղթղթակիցը վորուցել և գրել այն մասին, թէ ինչպես և ընթանում բերքահամարը։ Յեթե նա վրի բերքահամարի մասին առհասարակ, ապա նրա մատքերը ցիր ու ցան կլինեն, նա կզըի ամեն ինչի մասին մի քիչ և այդպիսի թղթակցությունը վոչինչ չի տա ընթերցողներին։ Իսկ յեթե նա նույն այլ թեման ձշուի ասենք թղթակցությունը ավիրի բերքահամարի ժամանակ՝ բրիգադի կամ առանձին կոլտընտեսականների աշխատանքին, կամ թէ հատկապես դրի լծկանների վիճակի մասին, նա այդպիսով ընթերցողների ուշադրությունը կենարունացնի աշխատանքի առավել կարեւոր հարցերից կամ բնագավառներից մեկի վրա։

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կարելի յէ գրել դանապան ձեվով։ Յեզ այն բանից, թէ ի՞նչպես և թեման ձշոված, ի՞նչ տեսակիետց և նա լուսաբանված դյուղթղթակիցի կողմից, հաճախ կախված է լինում թղթակցության պիտանի կամ անպետք լինելը թերթի համար՝ հենց տիյալ ժամանակաշրջանում։ Հաճախ մինելու թեման, նայած այն բանին, թէ հեղինակն ի՞նչպես և մուտքել նրան, կարող եւ լինել ժամանակին կամ մնդհակառակը, ընթերցողներին թիվալ «պատմություն», անցյալ տարվա ձյան մասին։ Յեթե, որինակ, ցանքից հետո գրում են թէ ինչպես պետք և նախապատրաստվել ցանքին, — այդպիսի թղթակցությունը թերթը չի տապահըի և նա կլինի միանդամայն իրավացի։ Իսկ յեթե թղթակցության մեջ քննության են առնընում այն սրատառները, վորոնց հետեւանքով ցանքն անցել և գոչ այնպես, ինչպես հարկն եր, յեթե այլ սրատառները կապահցում են անբավարար նախապատրաստության հետ, նշում են սիմաները, վորոնցից ապագայում պետք է խուսափել, — այդպիսի թղթակցությունը կարեւի յէ տապահըել և ցանքից հետո։ Նրա թեման ձիչտ է։

Իսկ առհասարակ պետք է աշխատել միշտ ընտրել այնպիսի

թեմաներ և այնպես ճշտել դրանք, վորագեղի թղթակցությունը կարդարով, մարդիկ ասեն — ահա! այդ ճիշտ է, դրա մասին անհրաժեշտ էր զրել: Յեվ այն ժամանակ զյուղթղթակիցը, այդ թղթակցության հեղինակը կլինի խկապես առաջավար, հաստրական կարծիքի խկական հրամանատար:

Այս և յուրաքանչյուր զյուղթղթակիցի խնդիրը: Նա պետք է լինի լավ հասարակական աշխատաղ և աշխատանքի իր բնագավառում առաջավագոր: Խոկական զյուղթղթակիցի մոտ լավ խոսքը յերբեք չի անջանափում գործից: Նա ճիշտ ցույց է տալիս դեպի աշխատանքը և դեպի հասարակական սեփականությունը սոցիալական վերաբերմունքի որինակներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՆՅՈՒԹԵՐԸ, ԱՇԽԱՏԵԼ ՆՐԱՆՑ ՎՐԱ

Առյօնվակի հացահատիկային խորհութեանությունում (Բաշկիրա, Ալշեկուի շրջան) աշխատող զյուղթղթակից Կաշբեկը «Զա կաչեստվո» պատի թերթում գրել եր այսպիսի թղթակցություն:

«ԳՈՐԾԻ կԱՆԳ Ե ԱՄԵԼ ԱԾԱԽԵՐԻ ՅԵՎ ՅԵՐԿԱԹԻ ՊԱԾԱԾԱԾՈՎ.

Դարբիններին լավ աշխատել չեն թույլատրում, վորով-չետե չկա յերկաթ, և ածուխն ել վաս և: Վորագեղի դարբենները լավ արտադրանք տան, զեկավարները պետք է նրանց տպահովեն յերկաթով և լավ ածուխով: Յերկաթ չկա, իսկ ճանապարհո շուտով վերջանում է և ցանքն ել քիներիս տակն է: Իսկ մենք չունենք յերկաթ, և ածուխն ել վաս և»:

Դժվար չե պատկերացնել, թե ինչպես է դրվել այս թղթակցությունը: Գյուղթղթակիցն ըստ յերեկութիւն պատահանք անցել է դարբնոց: Հարցը եթե ինչպես են գնում զորձերը: Դարբիններն ասել են, վոր յերկաթ չունեն և ածուխն ել վաս և: Գյուղթղթակիցը տուն է յեկել և ... զրել է թղթակցությունը:

Հավանութեն գարբնոցում գրությունն իսկապես վաս է յեղել: Գյուղթղթակիցը չի ստել, այդ բանում նրան մեղաղը չի կարելի: Բայց այնուամենայնիվ թղթակցությունն ստացվել եր վոչ համոզեցուցիչ: Կարդում ես այդ թղթակցությունը և չդիտես թե ինչու յե ձգձգվում յերկաթի փոխագրությունը, առհպատրակ յերկաթ գնիկով է արդյոք, ով և այդ զորձի համար պատասխանատու: Հասկանալի չե թե ածուխն ինչով և վաս, ով է զրահում հանցավոր — արդյո՞ք ածուխն այդպես

վասն է յեղել բերդած, թե այն վշացրել են իրենք՝ դարբենիները, վատ պահելու հետեւանքով: Զի նշված նաև դըռություններ գուրս զալու ճանապարհում չի ասվում թե այնուամենայնիվ ի՞նչ պետք է անել:

Յերեվում է վոր գյուղթղթակիցը շտապել և, չի պարզել գործի համար եյական շատ հանգամանքներ և չի հայտնաբերել անկանոնության խսկական հանցավորներին:

Ի՞նչ պետք է աներ ընկ. Կաշբեկնը վարպետի ամելի մանրամասն ու ավելի հանգամանորեն զրել դարբնոցում յեղած թերությունների մասին:

Նախ և առաջ հարկավոր եր ինչպես հարկն է խոսել իրենց դարբինների հետ, մանրամասն նրանց հարց ու վորձ անել ամենինչ մասին և մասնավորապես իմանուլ թե յերբ և ումից են նրանք ստացել ածուխը, այն ժամանակ հայտարարելով են արդյոք վոր ածուխն անպետք և, յե՞րբ և վերջացել յերկաթը և նրանք այդ մասին ժամանակին հայտնելով են արդյոք կոլտնտեսության վարչությանը:

Դարբինների ասածը հարկավոր եր նաև ստուվել ուրիշ մարզկանց միջոցով—վարչության և վերատուգիչ հանձնաժողովի անդամներից, անտեսվարից, պահեստավետից: Յեթե գյուղթղթակիցն այդ բանն աներ նա զուցե գար այն հետեւությանը, վոր վորոշ բանում մեղավոր են նաև իրենք՝ դարբինները:

Վերջապես, անհրաժեշտ եր, վոր գյուղթղթակիցը նույն այդ պարբինների միջոցով պարզեր և կողմնակության վարչությունում ստուգեր թե ի՞նչպիսի հնարավորություններ կան յերկաթ ու լավ ածուխ ստանալու համար, ու՞մ և հանձնարարված այդ զորձը, յե՞րբ կկատարվի հանձնարարությունը:

Գուցե վորեն մեկը կասի թե գա չափից զուրս լուրջ աշխատանք և այդպիսի մի փոքր թղթակցության համար: Ինչ արած քնիերներ, այլապես չի լինի—մեր բոլցեվիկեյան մամուլին աշխատակցելն առհասարակ շատ լուրջ և պատասխանատու զորձե: Այն պահանջում է մեծ բարեխոգծություն, խնամք, ուշագրություն: Ով վոր ուղղում է զրել լուրջ, թերթում տարմելու համար արժանի թղթակցություն, նա պետք է նյութի վրա լուրջ աշխատանք կատարի:

Լինում են վոչ բարդ թեժաներ: Յեթե զյուղթպակիցը վորոշել է թերթում զրել մի վորեն փաստի մասին, վորին անձամբ վկա յե յեղել, նա կարող է զեկավարվել միայն տեսածի մասին իր անմիջական տպավորություններով:

Բայց մեծ մասամբ և մանավանդ այն ժամանակ, յեր զյուղթպակիցն ուզում ե ընդհանրացնել նկատվող յերեվույթները, մատնանշել դրանց պատճառները, խորհուրդ տալ թիվնչպես խուսափել թերություններից, անհրաժեշտ է վոր նա ուսումնասիրի այն բոլորը, ինչ վերաբերում է տվյալ զործին:

Գյուղթպակիցների թղթակցությունների մեջ սիալների մեծ մասը կատարվում է չենց այն պատճառով, վոր այդ զյուղթպակիցները հաճախ բավականաչափ ծանոթ չեն ինում թե այն գործին և թե այն մարդկանց, վորոնց մասին նրանք դրում են: Վորքան ավելի բարեխղճորեն ուսումնասիրի զյուղթպակիցն այն, ինչի մասին պատրաստվում է զրել, այնքան ավելի համոզեցուցիչ կլինեն նրա թղթակցությունները և թերթի խմբավորությունն այնքան ավելի հաճույքով կտպազրի դրանք:

Գյուղթպակիցը վոչինչ չպետք է վերցնի ասածների հիման վրա, առանց պացուցման, և իրավունք չունի այդ սանը պահանջնելու իր ընթերցողներից: Դիմելով բոլեվիլիյան մամուլի առաջին թղթակիցներից մեկին՝ Ա. Վ. Բարուշկինին և խնդրելով նրան զրել թղթակցություն, Անինը նամակներից մեկում չիշեցնում եր նրան՝ «Աշխատեցեք հավաքել վորքան կարելի յե ավելի շատ փաստական տվյալներ» (Ն. Կ. Կրուստկայա — «Հենինը — կուսակցական մամուլի խմբադիր և կազմակերպիչ»):

Ասենք, գյուղթպակիցը վորոշել է մի թղթակցություն զրել կաթնապրանքային ֆերմայի պիճակի մասին կամ բերքահավաքի ժամանակ կորուստների զեմ պայքարելու մասին: Յե՛վ առաջին և՛ յերկրորդ զեպքում պետք է համարել ավելի շատ փաստեր, պետք և զրուցել, խորհրդակցել վործին տեղյակ մարդկանց—ողակալարների, բրիգադէջների, փորձված ծեր կոլտնտեսականների, անասնապահների հետ և այլն: Այդ գյուղթպակիցին հնարավորություն կտա ավելի բավ ուսումնասիրել այն հարցը, վորի մասին նա պատրաստվում է զրել:

Յերբ գյուղթպակիցը ձեռնարկում է թղթակցություն զրելուն, նա պետք է առենից առաջ ինքը պարզ պատկերացնի թե

ինչի մասին է զրելու: Ուստի, չափականց ողատակար և թեման ընտրելուց հետո կազմել այն հարցերի ցուցակը, վոր պետք պարզել և առաջնորդ ու տեղը նշել թե ինչպես պետք է արվի այդ:

Թե ինչպիսին պետք է լինեն այդ հարցերը, վորոշում և ինքը՝ գյուղթպակիցը: Վորեւ ստույդ կանոն այստեղ չկա: Բայց վորպեսպի ցույց տալ, թե մոտավորապես ինչպես կարելի յե կազմել այն հարցերի ցանկը, վորոնք անհրաժեշտ է պարզել թղթակցության թեման մշակելու, բերենք մի որինակ:

Գյուղթպակիցը Մարալովն իրենց «Պուտ կոոցխալիգմու» պատի թերթում («Պուտեկասուր» կոլտնտեսություն, Աւրենսկի շրջան, Գորկու մարզ) զրել եր այսպիսի մի թղթակցություն:

«ՀԱՇՎԻ ԱԲԱՆԵԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Մեր կոլտնտեսությունը գարնանցան կուլտուրանների ցանքի համար մասսայական հերկն սկսեց ապրիլի 30-ից: Այդ լավ և, բայց բրիգադներում կան թերություններ: Բրիգադները չպատճեն իրենց հոգածակերը և վազում են մեկ հոգածակից մյուսը, ժամանակի մեջ մասը կորչում և անտեղի: Զուգածկան գութաններին լծում են այնպիսի ձիեր, վորոնք ընդունակ չեն կատարելու այդ աշխատանքը: Բացի զրանից, բրիգադիրներ Վոլկովը և Զիստյակովը ման են գալիս զաշում, բայց չեն տեսնում, վոր կուլտնտեսականները յերեսանց են հերկում: Այդպիսի հերկը կանգրադառնամ բերքատվության վրա: Նկատի ունեցեք, ընկեր բրիգադիրներ և կոլտնտեսականներ, վոր ծանծաղ հերկը չերացնում բերքատվությունը, այլ ընդհակառակը, իջեցնում և այն: Հիշեցեք, ընկեր բրիգադիրներ ու կոլտնտեսականներ, վոր բարոր աշխատանքների ժամանակ պետք և պահպանել աղբուկանոնները: Միայն այդ բոլորի ողնությամբ մենք կարող ենք ստանալ հեկտարից 90—100 փութքիք:

Յուրաքանչյուրի համար, ով կարդա այս թղթակցությունը, պարզ և, վոր ընկ. Մարալովն ընտրել և կարեվոր թեժա, բայց այն գլուխ ե բերել վոչ շատ լավ: Թղթակցության մեջ իստակցությունը շատ է, իսկ փաստերը քիչ: Յեկ թղթակցությունը հաջողված չենց այն պատճառով, վոր գյուղթպակիցն սկզբից հենց չի վորոշել թե ինքն ինչպիսի հարցեր պետք և պարզաբանի, նախ քան հերկի առաջնորդ զրելու դրեմը: Իսկ այդ հարցերը կարող են լինել մոտավորապես հետեվյալը.

1. Արդյո՞ք բոլոր բրիգադները վարը սկսել են ժամանակին
(պարզել կոլտնտեսության վարչությունում) :

2. Ինչպես ելին նախապատրաստված ինվենտարն ու ձիերը
(խռով բրիգադների և վորակի տեսուչների հետ) :

3. Յե՞րբ, ո՞վ և ճի՞շտ և արդյոք հողամասերը բաշխել բարեկադների միջն (հարցնել բրիգադների, ողակների, շարքային
կոլտնտեսականների կարծիքը) :

4. Վարն ինչպես են զեկավարում բրիգադիրներն ու վար-
չության անդամները (իմանալ վար անողներից) :

5. Ի՞նչ խորությամբ են վարում (մի քանի տեղերում ան-
ձամբ չափել) :

6. Ի՞նչ խորությամբ պետք է վարել (հարցնել ազբոնմից) :

7. Ի՞նչպիսի պարտադիր ազբոկանոններ են խախտվում մեղա-
նում այս տարի վարի ժամանակ (զրուցել ազբոնմի հետ) :

8. Ի՞նչպիսի վնասներ են մեղ սպառնում այդ (հաշվել ազբո-
նոմի և հաշվետարի հետ) և այլն :

Յեթե ընկ. Մարալովն իր առջև, զներ նույնիսկ միայն այդ
հարցերը, նա կարողանար դրել շատ ավելի բովանդակալից ու
հետաքրքիր թղթակցություն, քան այն, վոր նա դրել եր: Իսկ
չե վոր նա անկասկած կարող եր այդ բանն անել զբարիսրեն ա-
վելի լավ:

Յերբ գյուղթղթակիցը նշել և այն հարցերի ցուցակը, վո-
րոնք անհրաժեշտ և պարզել, կարելի յէ ձեռնարկել նյութի հա-
վաքմանը — զանազան մարզկանց հետ զրուց ունենալուն, իբ-
ովագործությունները սոտովելուն, տեղում դորձի դրության ան-
միջականորեն ծանոթանալուն:

ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ՆՅՈՒԹԸ

Գետք և կանոն դարձնել քեզ համար յերբ հավաքում ես
նյութը, դու պետք է դիմենաս, թէ կոնկրետ ի՞նչ ևս վորո-
նում, ինչպիսի նյութ և քեզ անհրաժեշտ, բայց յերեք չպետք
և աշխատանքը ձեռնարկել կանխակալ, արդեն նախանդես պատ-
րաստված հետեւությամբ: Կարող ե պատահել, վոր նյութիցի
հետ մոռիկից ծանոթալու հետեւանքով զրությունը կնիրաբերվի
բոլորավիճն այլ կերպ և ամենելին վոչ այն լույսով, ինչպիս նա
քո առաջ պատկերանում եր: Դրա առաջ չպետք և աչքերը

Յերբ գյուղթղթակիցը նյութ և հավաքում թղթակցության
համար, նա պետք և վոչ միայն նշի այս կամ այն յերեվույթը, այլ

բոլոր անհրաժեշտ գեղքերում պետք և խորանա մինչն զրանց
պատճառները: Այսուեղ մեծ նշանակություն ունի այսպես կոչ-
ված մանրութերի վրա ուշադրություն դարձնելը: Վորովհետեղ
«կան զանազան մանրութեր-կան այնպիսիք, վորոնք վոչ մի նշանա
կություն չունեն և կան այնպիսի մանրութեր, վորոնք կոպած
են սոցիալիստական շինարարության հիմնական հարցերի հետ:
Իլլիչը կարողանում եր կառչել վորեւ կարեսը «մանրութից» և
ցույց տալ, թէ այդ «մանրութը» ինչպես և կապված մեծ, հիմ-
նական հարցի հետ»: (Լասինոստարովվակի բանթղթակցային դըս-
բացի ունկնդիրների հետ ն. Կ. Կրուպսկայայի ունեցած զրույ-
ցից):

Բնկեր Ստալինը մեկ սովորեցնում և «առանձին քննուղատա-
կան գիտողություններից անցնել ավելի խոր քննազատության»:¹⁾
Յերբ հայունաբերում ևս վորեւ անկանոնություն, պետք և հե-
տաքրքիր վել, թէ ով և զրա համար մեղավոր և ո՞վ և հովանա-
վորում այդ անկանոնությունը: Գյուղթղթակիցը պետք և յաւ-
րաքանչյուր հարցին մոռենա լրջորեն, գնահատի այն բազաքա-
կանապես: Յեթե բոլոր գյուղթղթակիցները միշտ այլպիս վար-
վելին, շատ անկանոնություններ ու չարչահումներ մերկացված
կլինելին շատ ավելի արագորեն և զրանցից շատերը հնարայոր
կլիներ միանդամայն կանինել:

Զրուցելով այն մարդկանց հետ, վորոնք կարող են անհրա-
ժեշտ անցելություններ տալ նրան, կամ խորհրդակցելով վորեւ
մեկի հետ, գյուղթղթակիցը վոչ մի բան չպետք և ընդունի կու-
րօրեն, հալած յուղի տեղ: Ամեն բան, ինչ հնարայոր և, նա
պետք և ստուգի, ամեն բանի մասին մանրամատն պետք և հարց
ու փորձ անի: Այսուղ վարձյալ կարելի յէ բերել վազիմիքիր
իլլիչ և նինինի որդինակը: Ն. Կ. Կրուպսկայան հիշում և.

«Պատահում» եր, վոր տեղից մի աշխատազ դալիս եր
վազիմիքիր իլլիչի մաս: Իլլիչն սկսում եր հարց ու փորձ
անել նրան, իսկ նա չեր ել ապաստմ վոր վազիմիքիր իլլիչը
հենց այդ մասին կհարցնի: Տեղի աշխատազնիրը հաճախ
տառմ են թէ «աշխատանքը մեղանում կանոնավորվում և»:
վազիմիքիր իլլիչը տալիս ե մեկ հարց, յերկրորդը, առա-
ջադրում և մի չարք հարցեր, վորոնց մարզը չի կարողա-

1) Բնկեր Ստալինի «Բնդպեմ ինքնաքնազատության լո-
գունդի գեոհետացման» հոգմածից: «Պրավդա», 26 հունիսի,
1928թ.

նույն պատասխանել, իսկ իլլիչի ձեռքից ընդհանուր Պրաղ-ներով չես ազատի, Հարկավոր և կոնկրետ փաստերով խո-սել: Նրա այդ ընդունակությունն ահա — Հարց ու փոք-անել ամենագիշավորի, ամենաելականի մասին— ինձ միշտ զարժացնում եր:

Նա կրազնում և հասպակ խոռքերով առաջազրել ամե-նալուրջ Հարցերը: Յեվ յեր մարդն Իլլիչի մոտից զնում եր, նա չըջապատող կյանքին արդեն սկսում է հաճախ այլ կերպ նայել, սկսում եր տեսնել այն, ինչ առաջ չեր նկա-տում»: (Լոսինոսարովսկի բանթղթակցային դպրոցի ունկնդիրների հետ Ն. Կ. Կրուպսկայայի գրուցից):

Թղթակցության համար նյութեր հավաքելիս հաճախ ան-չըրաժշտ և լինում վոր պյուղթղթակիցը ծանոթանու զործի համար նշանակություն ունեցող զանազան փաստաթղթերի հետ նիստերի արձանագրությունների, Հաշվետարության, անցյալ ժո-մանակիւ համար կոլանուսային բրիգադների աշխատանքի ամ-փոփառերի, վարչության կարդարությունների և այլն: Այդ բոլոր փաստաթղթերի հետ հարկավոր և վարչի բարեկարգենք և համուրեն: Քաղվածքները պետք է կառարել միանդամայն սուսյու: Զի կարելի փաստաթղթերից զուրս կորզել իր Հայե-ցողությամբ առանձին կոտրեր, յեթե զրանք ինքնուրույն կեր-պավ վերցված հակասում են ամբողջ փաստաթղթերի ռովանդա-կությանը: Յուրաքանչյուր քաղվածք կատարելիս պետք է ան-դպայման նշել թե ինչ փաստաթղթից և այն փատարված, ուժ կողմից և յերբ և ստորագրված, վորտեղ և պահպում կամ փորեկ և հրապարակված յեղել այդ փաստաթուղթը:

Գյուղթղթակիցը տեղեկություններ, խորհուրդներ, փատու-թրղթեր ստանալու համար գիմում և շատ մարդկանց: Նա պետք է միշտ հաստատապես հիշի, վոր իր աշխատակցությունը մա-մուլում — հաստարկական աշխատանք և, վոր ինքը վոչ մի տեսակ քննչական, տեսչական կամ վերահսկչական իրավունք-ներից չի ոգտվում: Ամենաժետ տեղեկություններ հազորդելու և փաստաթղթեր ներկայացնելու մասին զյուղթղթակիցը կարող է միայն ինդիքը, բնավ չպահանջելով վրօնիչ Յեթի, յենթա-դրենք, զյուղթղթակիցին: Բույց չեն տարբա ծանոթանու փաս-տաթղթերի հետ, իսկ նա այլ միանդամայն ամենաժետ և հա-մարում զործի հյությունը լուսարաններու համար, նա պետք է արդ մասին ուղարկությունը իրականացնել այդ դպրոցից: (Լոսինոսարովսկու բանթղթակցային դպրոցի ունկնդիրների հետ՝ Ն. Կ. Կրուպսկայայի ունեցած պրուցից):

Թյունն արդեն ինքը ճանապարհ կվանի թե ինչպես ծանոթանալ նման փաստաթղթի հետ:

Եսու հաճախ, առաջարկված Հարցին լիովին համապատաս-խանող լավ թղթակցություն դրելու համար զործին տեղյակ մարդկանց հետ հենց միայն զրուց ունենալը և նույնիսկ փաս-տաթղթերի հետ ծանոթանալը զյուղթղթակիցի համար դեռ քիչ ե: Վորպեսպի լավ բմբանել զրկած Հարցը, վորպեսպի չի չել թե կուսակցության կամ կառավարության ինչպիսի վորոշումներ են Հրապարակված յեղել այդ Հարցի վերաբերյալ, վորպեսպի Հավոթիցի ինքը և շփոթության մեջ չգցի ընթերցողներին, շատ ոգտակար և վոր պյուղթղթակիցն աչքի անցկացնի այդ Հարցի վերաբերյալ յեղած զրականությունը, ծանոթանա «Պրավդա»-ի, մարդային կամ ըրջանալին թերթի մի քանի համարներին: Յերբ զյուղթղթակիցը զրում և ամեն տեսակի հատուկ Հարցերի մա-սին (ազգային կամաց ամենա գիտական, տնտեսական, գիտական), Հարկավոր և յերբեմն զիմել հատուկ զրականության, ուղեցույցների, ժուռ-նալների ու հոգվածների ոգնությանը:

Միշտ անհրաժեշտ և ծանոթանալ նաև մեր առաջնորդների, Լենինի և Ստալինի հոգվածների հետ, հիշել թե նրանք ինչ են տակ այն Հարցի վերաբերյալ, վորի մասին զրում և դյուղ-թղթակիցը:

Գրքի ոգնությամբ հեղինակավոր մարդկանց հետ «Խոր-հրպակցելը» միշտ և չափազանց ոգտակար է: Լենին այդ ա-նում եր շատ հաճախ այդ մասին մենք զիտենք ընկ. Կրուպս-կայացի խոռքերից:

«Ահա, վորեն իրազարձություն, վորեն դիսկուսիա, սուր-դրություն քաղաքացիական պատերազմի ճակատում, մրտ-նում և նրա առանձնահանյակը, նա նստած է և կարգում և Մարքսի-Ենգելսի աշխատություններից: Յես մտածում եմ «Այդ ինչպես և նա այժմ կարգում Մարքսին»: Միանգամ նա խոսկցության ժամանակ ասաց՝ «Փետք և խորհրդակցել Մարքսի հետ»: Այդ նշանակում և խորամուտ լինել թե Մարքսն ինչ և տակ այն Հարցերի վերաբերյալ, վորոնք հասուկ նշանակություն ունեն ավելաց մուենին: Յեվ մենք աենում ենիք թե ինչպիս Մարքսի՝ նոգեւոի ուսմունքն՝ ողնում եր Լենինին». (Լոսինոսարովսկու բանթղթակցային դպրոցի ունկնդիրների հետ՝ Ն. Կ. Կրուպսկայայի ունեցած պրուցից):

Յերբեմն այսպես և պատահում, վոր իր թղթակցության համար նյութեր հավաքելով, զրուցելով զանազան մարդկանց հետ, ծանոթանալով փաստաթղթերին, զյուղթղթակցը բացի նրանից ինչ վոր նրան ույլալ մոմենտին անհրաժեշտ են, իբաւ նում և դարձյալ շատ այլ հետաքրքիր տեղեկություններ։ Նույնիսկ յեթե այդ տեղեկությունները չոփտագործվեն ել առաջիկա թղթակցության մեջ, նրանցից չպետք իսւսակել։ Գյուղթղթակցը պետք է լինի ամենը, ինչ վորեւ պատճառով նրան թվում և հետաքրքիր, անհրաժեշտ է զրի առնել։

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

Փորձված, իրենց գործը սիրող զյուղթղթակցների դրամանում միշտ պատրաստ ե լինում ծայրը սրած մատիս և հուշատեր։ Այն բացիում և փոք միայն թղթակցություն զրկութառաջան, մեջ չէրեխան նոր նշումներ։

Կոլտնահսային ժողովում նստած ժամանակ, ընկերների հետ զրոցելիս, բրիդագային պատի թերթի հերթական համարի հետ ծանոթանալիս, կոլտնահսային ակումբ, զրադարան, ընթերցարան մտնելիս ուշադիր զյուղթղթակցն ամեն անզամ բաց և անում հուշտակերը և հիշելու համար զրում և նրա մեջ մի քանի խոսք։ Յերբեմն զա պարզապես վորեւ մեկից լսած հետաքրքիր ֆրազ և։ Յերբեմն հետաքրքիր թիվ։ Յերբեմն ազանուն՝ հիշելու համար։

Այդպիսի զյուղթղթակցի հուշտակերում, անկախ նրանից, այդ հարկագործ և նրան, թե հարկագոր չե այժմ, առաջիկա թղթակցության համար, — նշվում և ամեն բան, ինչ վոր թվում և հետաքրքիր՝ և լսվը և պատը։ Աթլանդ նշվում են և առաջա թղթակցությունների թեմաները և նրանց համաստ պլանները և նոր դրահրի անունները և քաղվածքներ՝ թերթերից։

Ի հարկե, այն բոլորը, ինչ վոր դրի յի առնվում, անմիջապես չի ուղարկործվում։ Յերբեմն զրի առնելով այս կամ այն փաստը, թիվը, զրուցի ընթացքում լսած ֆրազը, դու ինքը ել չդիմես, թե այն արդյոք չուտ հարկագոր կլինի քեզ։ Բայց դրանք յերեցիցն պետք կը ան անզամանորեն և հիանալի ծառայություն կմատուցեն, կողմնեն առաջ թղթագություններից մեկը զրի համուլտոնից կերպով, բաղմաթիւն որի համար վարեւ պատճենագործությունը կամ դրանք թույլ տվող հնարանվորությունը։ Իսկ յուրաքանչյուրը յերեկութիւն պատճառներն ըմբոնելը և դրանց մասին ընթերցողներին պատճեն կարողանալ, — մեծ զարծ և զյուղթղթակցի համար։

Յերբ զյուղթղթակցն սկսում և աշխատել վորեւ թղթակցության վրա, նու ի հարկե ամենից առաջ ոգտագործում և իր նոր նշումները, վորոնք կատարվել են հատկապես այդ թղթակցության համար։ Բայց բացի զրանից շատ ողտակար և թերթել նաև հին հուշտակերը՝ տեսնել այսուղ չկա՞ արդյոք ավլալ դեպքի համար հարմար վորեւ բան։ Յեզ համարյա միշտ կպանի անհրաժեշտ թիվ, հետաքրքիր փաստ և վառ խոռք, վորը յերեմն կարող և նոր ձեռվ լուսարանի ամբողջ թղթակցությունը։

Հուշտակերի աչքի անցկացումն ամեն գեղքում կարող և զյուղթղթակցին հետաքրքիր թեմա թելապրել թղթակցության համար, յեթե համար նշումներ են յերեկում միենույն փաստերի մասին, նշանակում և այդ փաստերը պատճական չեն, նշանակում և արժե զրանց մասին մասնել և զրել։

Հետաքրքիր ամեն բան զրի առնելու սովորությունը զյուղթղթակցի մեջ զարգացնում և դյուրազզացությունը, ամեն բան տեսնելու ընդունակությունը, նրան սովորեցնում և շատ «մանրունքների» հետեւում տեսնել լուրջ զործեր և ձիչու դնահանել զրանք։ Զե՞ վոր յերբ միամման փաստերը դիտում ես առանձին-առանձին՝ այդ մեկ բան և, իսկ յերբ միենույն փաստերը քո առջև կանգնեն միամման՝ զրանք համար կյերևիան միամմարյան այլ կերպ։ Պարզ կը առնան նաև այդպիսի փաստեր ծնող պատճառները կամ զրանք թույլ տվող հնարանվորությունը։ Իսկ յուրաքանչյուրը յերեկութիւն պատճառներն ըմբոնելը և դրանց մասին ընթերցողներին պատճեն կարողանալ, — մեծ զարծ և զյուղթղթակցի համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

Գյուղթղթակցը բարեկիզմարեն հավաքել և բարոր անհրաժեշտ նյութերը։ Նա վերսովին կարգում և զրանցումները, համարվում և, վոր անհրաժեշտ հարցերն իր համար պարզել և բարեկանաչափ խորը կերպով ու բաղմակոզմանիորեն։ Նա իրեն իրավասու յի համարում զարու վորոշ հետեւության և զրանց ժամանք պատճենու ընթերցողներին, այսինքն դրեւ թղթակցություն։

Ինչ չից սկսել։

Հավաքած ամբողջ նյութից ամենակարենը, սառողվածը, համուկցուցիչն ընտրեցնելուց հետո մասնակիցներին պատճեն վարեւ պատճենագործությունը։

Լամ գյուղթղթակիցը պատրաստվելով թղթակցություն դրելու, միշտ կհամաքի ավելի շատ նյութ, քան թե նու հետադայում կարող ե ոգտագործել: Նու կաշխատի, վորակեղի գործի վոչ մի կողմը չփրիսկի իր ուշադրությունից: Բայց բոլոր նշումներից անհրաժեշտ է ընտրել ամենահիմնականը, ամենակարևորը և դործի համար բնորոշը: Պետք է զեն շպրանչ վոզջ պատահականը, վորն ուղղակի առնչություն չունի թղթակցության թեմայի հետ:

Սխալ են վարդում այն գյուղթղթակիցները, վորոնը նկարագրելով մի վորեե վաստ, կամ ձեռնամուխ լինելով վորեե հարցի լուսաբանմանը, սկսում են դրա մասին պատմել «Ազամի ժամանակվանից», թղթակցության մեջ խցկում են զործի համար կողմանակի ամեն տեսակ խոսակցություններ, շշուկներ ու նկատուումներ: Ամբողջ նշվածից թղթակցության մեջ պետք է մնա միայն այն, ինչ առնչություն ունի թեմայի հետ և ինչ վոր խօսապես ստուգված և հեղինակի կողմից:

Լինաւմ ե նուև այլ կերպ: Քննության առնելով իր նշումները, գյուղթղթակիցը կարող է հայտնաբերել, վոր վորոշ բան զեռ մնացել է չպարզված: Այլպիսի դեպքերում անհրաժեշտ է մեկ անդամ եռ զբարդիկ պակասող տեղեկությունները վորոնելով և այն ամենի լրացնեցիչ ստուգմամբ, ինչ վոր տարակույթ և առաջացնում: Յեկ գրանից հետո միայն գրել թղթակցությունը:

Բայց ահա նյութն ընտրված է: Այս բոլորը, ինչ տնտեսք ե, դեռ և շպրանչած: Այն, ինչ մնացել է, տալիս է զործի պարզ պատկերը և չի ստացացնում վորեե տարակույթ: Վորակեսկի թղթակցությունը լինի կանոնավոր, վորնչակի ու պարզ, վորակեսկի նրա մեկ միտքը հաջորդաբար բղխի մյուսից, ուղարկար և պլան կազմելը, այսինքն հաջորդաբար զրի տանել հիմնական մտքերն ու փաստերն այն կարգով, ինչպես վոր գրանք շարադրվելու յեն ապագա թղթակցության մեջ:

Ի՞նչպես և կազմվում պլանը: Յույց տանք այդ որինակով: «Գանիլովո» կոտնանասության (Ոկուրափակի շրջան, Հենիկել պլատի մարզ) կաթնասպանքային Փերմայի վարիչ՝ գյուղթղթակից Դիմիտրիել վորոշել եր պատի թերթում պատմել այն մասին, թե ինչպես ե ընթանում ծնի կամպանիայի նախապատրաստությունը: Ծնորելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, նու կազմեց այսինի պլան:

1. Հզի կովի խնամքը:

2. Նոր ծնկած չորթերի պահպանումը:

3. Ֆերայի պատրաստությունը:

Հետեւելով այդ պլանին, նա զրեց մի փոքր, բայց չափազանց պարզ շարադրված թղթակցություն, վորը և տպինց «Կորուպնայա բորոգդա» պատի թերթում:

«ՆԱԽԱԳԱՏՐԱՍՎԵՆՔ ԾՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

Հորթի խնամքը մեղանում սկսվում է հզի կովի խնամքից: Հզի կովերին մենք կերակրում ենք ավելի սուասորեն: Կովերի կեթը մենք դադարեցնում ենք ծնից յերկու ամիս սուած: Կովերին տրվում է բացառապես թարմ, մաքուր ջուր: Հզի կովերի նկատմամբ վերաբերմունքը լինում է ուշադիր, փաղաքչական:

Կովի ծինը կատարվում է ծննդաբերության շենքում, լիակատար լուսթյան մեջ, կովապահի հակողության տակ: Նոր ծնկած հորթին վերցնում են մաքուր ջորով:

Ցուրաքանչյուր նոր ծնկած հորթի համար հատկացվում է առանձին վանդակ: Հորթերի կերակրումը կատարվում է ըստ առցիսնի: Կերակրվում են որը չորս անգամ:

Հորթանոցը կահավորված է: Ֆերման լիոնին ապահոված է կանցենտրանտներով (խոռ, վարսակ, քուսակ, հյութակի կերեր՝ հորթերի աճեցման համար):

Թղթակցության պլան կազմելը, յերբ դիտես գործի բոլոր հանդամանքները և ձեռքի տակ ունես բալոր նյութերը, — գըգակար չե: Իսկ պլանով թղթակցություն դրելը շատ ազնիվ հետո, թղթակցությունն այդ դեպքում ստացվում է ավելի լավ: Փորձեցեք և ինքները կհամոզվեք զրանում:

Յեթև թղթակցությունը մեծ չե, կարելի յե սահմանափակվել միայն պլանով: Իսկ յիթե թղթակցության մեջ լուսաբանվող հարցը բարդ է և պահանջում է բազմաթիվ փաստերի մանրամասն լուսաբանում, ողտակար և կազմել նաև կոնսոլեկտ, այսինքն հիմնական փաստերի ու մտքերի համառոտ շարադրումը: Այդպես եթ անում սովորաբար նաև լենինը:

«Նախագան հողված դբելը, նա սովորաբար դրում եր հողվածի կոնսոլեկտը: Բատ կոնսոլեկտի կարելի յեր դիտել իւթիչի մտքերի ամբողջ ընթացքը: Կան մի շարք հողվածներ, վարուց կոնսոլեկտները իւթիչի կազմից ուղղվում եյին յերկուական, յերեքական անդամ» (Ն. Կ. Կրուպսկայա, —

«Հենքնը՝ կուսակցական մամուլի խմբագիր և կտղմա-
կերպիչ»):

ՅԵՐԵ պլանը կամ կոնսուլտատ կազմված է, կարելի յե-
սկած թղթակցությունը դրելը: Թե ինչպես դրել այդ մասին
վորեւ պատրաստի գեղատոմու չկա: Լավ թղթակցության արժա-
նիքներից մեկն ել հենց այն է, վոր գյուղթղթակիցն այն դրի եր-
գիտեցածի պես, վոր թղթակցության կառուցվածքը, լեզուն և
ամրող շարադրանքը լինի յուրահատուել, նման շինի ուրիշի
թղթակցություններին: Բայց այն մասին, թե ինչպես չպիտք է
դրել, ինչից պետք է խուսափել թղթակցության վրա աշխատե-
լիս, առել կարելի յե և անհրաժեշտ է: Այդ ել հենց մենք այժմ
կանենք:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԶԲՈՂՆԵԼ ՄՈՒԹ ՏԵՂԵՐ

Վորակապի թղթակցությունը համար իր նպաստակին և հարկ
յեղած տագավորությունը գործի ընթերցողի վրա, այն պետք
է ընթերցողին տա գործի պարզ պատկերը:

ՅԵՐԵ թղթակցությունը պարունակում է հենց միայն ընդ-
հանուր դատողություններ՝ առանց փաստերի, կամ թե նկարա-
գրելով փաստերը չի խոսում այն մասին, թե յե՞րբ, վո՞րտեղ և
ու՞մ հետ են դրանք տեղի ունեցել, —այդպիսի թղթակցությունն
ակնհայտորեն վատ է:

Գյուղթղթակից կաշիրնը, Ռայելսկի հացահատիկային
խորհտնեսությունից (Ալչեսկի շրջան, Բաշկիրիա) ընտրել
եր հետաքրքիր թեման նա վորոշել եր ամփոփել յերեք ստախո-
նովյան տասնորյակների արդյունքները: Նա, ըստ յերեվույթին,
հավաքել եր նույնիսկ վորոշ նյութ, իմացել եր, թե ինչպես ե
ընթանում գործը: Բայց իր՝ «Զա կաշեստվո» պատի թերթի
թղթակցներին կաշիրնը պատմեց ահա թե ինչ:

ԽԵՍՈՒՄ ԵՆ ՍՑԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

ՄԵզանում անցկացվեց մեկ ստախանովյան տասնորյակ-
փորոշ ընկերներ լավ ելին աշխատում: ՅԵՐԿՐՈՐԴ տասնոր-
յակում նույնպես վոչինչ: ՅԵՐԿՐՈՐԴ տասնորյակն անցած
հենց այնպես, կարծեք թե չելին ել աշխատում: Զնայեցին,
թե ինչ կա պլանի մեջ, —և չարեցին: Պլանի նշումը յե-
կավ գրասենյակից, բայց արհեստանոցում չստուգեցին:
Մասեր չկանութեալ բանը հաշվի չառան: Բաժանմունքը չու-

նի կողեկտիվ պայմանագիր: այն պլանի մեջ կլինի յերկ-
րորդ տասնորյակում»:

Ինչո՞ւ յե այս թղթակցությունը վատ:

Վորովհետեւ ընթերցողներն այդ թղթակցությունից ևն ի-
մասն, թե կոնկրետ կերպով վո՞ր «մի քանի ընկերներն» են ա-
ռաջին տասնորյակում լավ աշխատել և ինչումն և արտահայտ-
վել այդ լավ աշխատանքը:

Վորովհետեւ հասկանալի չե, թե հեղինակը վո՞ր աշխատանքն
և համարում անբավարար: Զե՞ վոր «նույնպես վոչինչ» և «Հենց
այնպես» բառերի մեջ յուրաքանչյուրը կարող ե զնել իր միտքը:
Յեկ չե՞ վոր հավանորեն վո՞ւ բոլորն են աշխատել միտաեսակ:
Իսկ թե ո՞վ ե լավ աշխատել, ո՞վ ավելի վատ, ո՞վ բոլորովին
վատ, — այդ բանը թղթակցության մեջ չի յերեռում:

Վերջապես, միանգամամբն անհասկանալի յե—գյուղթղթա-
կեցը զրում և ամրող խորհտնեսության մասին, թե՞ միայն
իր բաժանմունքի: Հայտնի չե, թե վո՞ր բաժանմունքում չկա
պայմանագիրը, վո՞ր արհեստանոցին և վերաբերվում խոսքը թղթ-
թղթակցության մեջ, ի՞նչ մասեր, ի՞նչ մեքենաների համար են
պակասում, և այլն:

Իսկ չե վոր այս բոլորը, հավանորեն, հեղինակին հայտնի
յե և յեթե նա այդ բոլորի մասին պատմեր ընթերցողներին,
կարող եր տոացվել լավ թղթակցություն:

Մի այլ որինակ: «Կրասնիյ Զալորիկ» կոլտնտեսության
(Ոկուլովմակի շրջան, Լենինգրադի մարզ) փայտահատ գյուղ-
թղթակիցները հսկում ելին ձիտպան ֆյեուլորովի աշխատան-
քին: Հիշելով մի շարք փաստեր, նրանք յեկան այն համոզման,
վոր ֆյուլորովն անպետք ձիտպան և և այդ մասին գրեցին
«Ստախանովյաց» պատի թերթում: Գրեցին այսպես.

«ՎԱՏ ԽՆԱՄՔ ԶԵԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ»

Զիադան Ֆյեուլորովը վատ և վերաբերվում ձիմքի հետ:
Կոլտնտեսականները հաճախ ձիերին ծում են ջրված,
ձիերն ախոռից դուրս զալիս կոծում են զույլերը և զետ-
նից իբրեւ բերանն են առնում ձյունը: Խոար տրվում է ա-
ռանց վորեւ կարգի: Հաճախ պատահում ե, վոր ձիերը
կանդնում են առանց խոտի: Ֆյեուլորովի ձիերի գերու-
թյունն ամրող ժամանակ միջինից ցածր և լինում, չնայա-
վոր ձիերը լիովին ապահովված են ինչպես խոտով, այն-
պիս և Փուրածով: Անհրաժեշտ է, վոր կոլտնտեսության

վարչությունն Ֆինուրովին ստիպի աշխատել այնպես, ինչ-
պես հարկն է»:

Ինչումն եւ այս թղթակցության հիմնական թերությունը,
Նրանում, վոր թղթակցությունն անհամոզեցուցիչ եւ, նրանում,
վոր հեղինակները փաստեր չեն բերում, վոր նրանք ուղում են
ընթերցողին ստիպել, վորպեսզի նա իրենց հավատ առանց
ապացուցների: Ապացուցներ նրանք ըստ յերեվութին չառ
ունեցել— և աչա հարկավոր եր «Հաճախ» բառի փոխարեն րե-
րել թեկուզ յերկու-յերեք որինակ: Հարկավոր եր ստիպել, թե
կոլտնտեսականներից ո՞վ եւ յե՞րք եւ կոնկրետ կերպով ֆյեռու-
րովից ստացել չըրգած ձիեր, վո՞ր որը նա ձիերին խռո չի
տիպել, ո՞վ եւ ապացուցել վոր նրան վստահված բոլոր ձիերի գե-
րությունը միջինից ցածր եւ: Այն ժամանակ այդ թղթակցությանը
կամատար յուրաքանչյուր ընթերցող:

Թղթակցության մեջ, կրկնում ենք, պետք եւ ամեն ինչ լինի
պարզ: Յուրաքանչյուր միտք պետք եւ աշխատել ամրաօնդել
փաստերով և այդ անհրաժեշտ եւ վոչ միայն մերկացնող թղ-
թակցությունների մեջ, այլ նաև այն ժամանակ, յերբ նկա-
րագրում եւ վորեւ մեկի լավ կողմը:

«Կրասնի լուչ» կոլտնտեսությունում (Յելեցկի շրջան, Ար-
յոլի մարզ) յեղել եւ այսպիսի դեսք: Գյուղթղթակցը, վո՞րն
այդ կոլտնտեսության վարչության անդամ եւ, վորոշել եր հասա-
րակայության առաջնորդ ըրիկադիր կուզնեցովի լավ աշխա-
տանքը: Բայց նա այդ բանի արեց անհաջող: Ահա նրա թղթակ-
ցությունը, վորը տղագրվել եր թերթում:

«ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲՐԻԳԱԴԻՐԸ

№ 2 բրիգադի բրիգադիր Տիխոն Ֆիլիպովիչ կուզնեցովը
պայքարում եւ ստախանովյան գարնանացանի և բերքատվու-
թյան բարձրացման համար: Նա ստախանովյական և և ակ-
տիվ մասնակցում եւ բրիգադային պլանները կազմելուն,
ինչպես նաև հետ չի մնում մյուս՝ բրիգադների տա-
խանովյան տառնորյակի կատարման և դարնանացանի կամ-
պանիային նախապատրաստմելու առզարկում:

Նրա բրիգադում ամբողջ աշխատաքն ընթանում եւ կոնվեյե
րով ըստ տրված պլանի, այսպես որինակ— թուշունների
աղբից մոխրի հավաքման և զոմաղբի փոխադրման գծով
նույնական գերակատարութով:

Կազեյեվսկի գյուղառհրդի «Կրասնի լուչ» կոլտնտեսու-

թյան մնացած բրիգադները պետք եւ պրինակ վերցնեն Տի-
խոն Ֆիլիպովիչ կուզնեցովից»:

Ամենայն հավանականությունը, ընկ, կուզնեցովն իսկապես
լավ, որինակելի բրիգադիր եւ, բայց բանի վոր գյուղթղթակցն
այդ բանը փաստերով չապացուցեց, չատ մնթերցողներ չհամոզ-
վեցին դրանում: Նրանք կարող եւ պատահել վոր ասեն.

—Ահա, զովում եւ զովում, բայց ի՞նչի համար, այդ գաղտ-
նիք և մնում... Կոչ եւ անում որինակ վերցնել, բայց թե ի՞ն-
չից—անհայտ եւ: Վո՞չ, դու ապացուցիր...

Այստեղից հետեւություն՝ թղթակցության մեջ չպետք եւ վի-
նեն վորեւ մութ տեղ: Գրելով թղթակցությունը, ստուգիր, թե
արդյոք նա համոզիչ կերպով առում է այն մասին թե՝
ինչ և կատարվել,

ուժ հետ,

վո՞րակեդ,

յե՞րք,

հայտնաբերված են արդյոք պատճառները, ցույց տրված
են արդյոք շտկման ուղիները,

յեթե զրվում եւ թերությունների մասին.

սովորեցնում եւ ա՞րդյոք թղթակցությունը, յեթե նրա մեջ
խոսվում եւ հարվածայնի կամ ստախանովյականի աշխատան-
քի դրական փորձի մասին:

Յեթե թղթակցությունը պատասխան տալիս եւ այդ հարցե-
րին,— նշանակում է փաստորեն ամեն ինչ կանոնավոր եւ:

ԸՆԴԴԵՄ ՍԽԱԸ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Մինայն փաստերին կարելի յեւ մոտենալ տարբեր ձևով,
պանազն կերպ լուսաբանել զրանք: Նայած այդ բանին, փա-
ստերը կարող են տարբեր ձևով ներդորել ընթերցողի վրա:
Գյուղթղթակցը պետք եւ հոգ տանի, վորպեսզի ընթերցողները
ձիւտ ըմբռնեն իր նկարագրած փաստերը: Իսկ դրա համար
անհրաժեշտ են նախ և առաջ, վոր գյուղթղթակցն ինքն այդ
փաստերն ինչպես հարկն եւ ըմբռնի, քաղաքականապես ճիշտ
մոռեցում ունենալ զեպի գրանց լուսաբանումը:

Գյուղթղթակցն ի հարկե, չի կարող անտարբեր մնալ զե-
պի այն, ինչի մասին նա գրում է: Յեթե թղթակցության հեղե-
նակին չի հետաքրքրում այն հարցը, վորի մասին ինքը գրում
է, յեթե այդ նրան չի հուզում, յեթե գյուղթղթակցն ինքը չի

ըմբունել իր վերաբերմունքը դեպի այդ հարցը— այդպիսի թշրիմության դիմումը մեծ չէ լինի: Փաստերի ընարությունը, ուժը բանց դասավորումը թղթակցության մեջ, դրանց բացատրումը պետք է ընթերցողին հասցնեն միանգամայն վորոշակի հետեւթյունների, վորոնք գյուղթղթակիցը համարում է ճիշտ: Բոտ վորում, յերբեք չի կարելի մոռանալ զործի մյուս կողմէ մասին— թղթակցության անպայման ձմբարացիության մասին: Գյուղթղթակիցն իրավունք չունի վոչ միայն խեղաթյուրելու նկարագրվող իրադարձությունները, այլև իրավունք չունի բոության մատնելու դործի համար նշանակություն ունեցող վորոնք լուրջ հսկամանք:

Սխալ են վարկում այն գյուղթղթակիցները, վորոնք վարուակություններն ընթերցողին ցույց տալ վարուակությունների տակ, վորեւ բրիգադի մասին այսոր գրում են միայն ու դույներով, վաղը՝ ամբողջապես վարդադույն, այսոր նրա ժեղացակացի, վաղը՝ ամբողջապես վարդադույն, իսկ վաղը, ինչպես ասում են, — նրան հասցնում են յերկինք: Զե՞ վոր վաս բրիգադը հաջորդ որը հենց միանգամից չի կարող դառնալ լրաց: Նշանակում է պետք է իրեն սովորեցնել վաս բրիգադում ևս տեսնելու բարեխիղճ կոլոնտեսականների, վորպեսզի հետ մնացողներին կամ անբարեխղճորեն աշխատաղներին նրանց հավասարեցնել:

Հարկավոր է նաև կարողանալ, չկուրանալով նվաճումներով, դրանց հետ միասին նշել յեղած թերությունները: Յեփ յեթե դրանք լուրջ թերություններ են, դրանց մասին ընթերցողներին պատմել նույնիսկ դրական վործի մասին զրկող թղթակցության մեջ:

Հատկապես վնասակար են այն թղթակցությունները, վորոնց մեջ գյուղթղթակիցը քննադատելով մի վորեւ վորոշակի փաստ, առանց հարկ յելած հիմքի ընդհանրացնում և այդ: Յենթալրենք, թե բրիգադում կատարվել է խոտանի մի դեպք— ճիշտ չեն կատված յերկու-յերեք խուրձու և չնայած վոր այդ բրիգադը սովորաբար լավ է աշխատում, գյուղթղթակիցն ոկը սում են հենց միայն այդ փաստի հիման վրա գրել թե «բրիգադը պոչում է պար գալիս», «բրիգադը հետ ե մնում» և այլն: Այդպես զրել չի կարելի, այդ լութերցողի մեջ ստեղծում է վոչ ճիշտ պատկերացում իրերի խիստան դրության մասին:

Այսպիսի գեղքերը դժբախտաբար սակավ չեն: Որինակ գյուղթղթակից կուզնեցովն իժեկսկի շրջանային «Զա սոցիալի-

տիչեսկոյն ժիվուտնովստավո» թերթի խմբագրությանն եք ուղարկել այսպիսի մի թղթակցություն:

«Վիժելեսսկի Անդրեյիսակ» կոլտնտեսությունում կոլտնտեսականներն անպատճի կերպով հափշտակում են կոլտնտեսային այդու ցանկապատն ու արժեքագոր շնչանյութերը և դրանք վառում են վորպես փայտ: Անհրաժեշտ է, վոր վարչությունը վերջ գնի այդ խայտառակությանը և հանցափոր-ներին յենթարկի պատասխանառվության»:

Գուցե կոլտնտեսականներից մեկն ու մեկն իսկապես հավատակել ե հանրային բարիքը: Դրանց հարկավոր եր անպայման մերկացնել, հիշատակել անուններն ու ազգանունները, սոսոյդ կերպով մատնանշել, թե յե՞րբ և ի՞նչ են հափշտակել այդ մարդիկ: Բայց չհիշատակելով զողերին, սահմանափակելով «կոլտնտեսականներ» բառով, թույլ տալով սխալ ընդհանրացնում, գյուղթղթակիցը դրել եր վաս, վնասակար թղթակցություն: Նա անհիմն կերպով զողության մեջ մեղադրել եր եր կոլտնտեսության բոլոր անդամներին: Մինչդեռ նրանց մեծամասնությունն անկատկած աղենիվ մարդիկ են:

Եերենք զարձյալ մեկ որինակ: Կույրեշելի անվան կոլտնտեսության (Սարայելի շրջան, Մոսկվայի մարզ), «Ստախանովեց» պատի թերթում տպագրվել եր «Պայցքարենք հանուն վարպետ վերանալը մի թղթակցություն: Երա հեղինակը չընկնելով մանրամասնությունների մեջ, չիշտատակելով վորեւ աղջանում, ուղղակի նշել ե, վոր «Հինգերորդ, ութեցորդ և 11-րդ բընդապներում խոտանունքը կատարվում է անորակի»: Յեփ նա նույնպես սխալ եր վարպետ: Զե՞ վոր կոլտնտեսային յերեք բրիգադներում կան մեծ թվով զանազան մարդիկ, մի՞թե նրանց մեջ չկար գոնե ժեկ-յերկու բարեխիղճ, վորձված կոլտնտեսական, վորոնց կարելի յեր նույնիսկ որինակ բերել ուրիշների համար: Դրան վոչ վոր չի հավատա:

Գյուղթղթակիցը պետք է ամեն բանին տա ճմարիտ պահանական: Նա պետք է վոչ վոքի չիւրագրի վոչ ուրիշների ծառայությունները, վոչ ել ուրիշների սխալները, չպետք և թույլ տա սխալ և հետեւապես վնասակար ընդհանրացնութեր:

ՔՆԱԴԱՏԵԼ ԲԱՐԵՒՆՑՈՐԵՆ

Քննադատությունը և ինքնաքննադատությունը միշտ մշղել են և մնան են բոլցելիկյան կուսակցության, խորհրդային իշխանության, բոլոր աղնիվ աշխատավորների ամենասուր զին-

ըս : Ժողովրդի թշնամիների մերկացումը վողջ նեխածի , ստորի , սոցիալիզմի շահերին թշնամի ամեն բանի մերկացումը , ամեն տեսակի թերությունների հայտնաբերումը մեր ամրոց մամուլի , այդ թվում պատի թերթերի ու դյուզթղթակիցների ամենապատասխանառու խնդիրներից մեջն ե :

Դետք է քննադատնել առանց ով լինելը նկատի ունենալու , առանց գոհաբերելու ճշմարտությունը հանուն ինչ վոր կողմնակի նկատառումների , չաշդի չառնելով , ինչպես առում են , վոչ արդարությունը , վոչ ծանոթությունը :

Բայց հարկավոր և քննադատնել և վոչ թե հայոյել :

Չափազանց վատ և վարվել , որինակ , Բիսարսկի դյուզիոր չըրդի (Սարապուտիկի շրջան , Կիրովյան մարզ) պատի թերթի խօսադրական կոլեգիան , վորը ճիշտ քննադատելով մի քանի սիսաներ , կոլտնահսության , դյուզի բոլոր ղեկավար ախտառողներին անվանել և ժողովրդի թշնամիներ :

Ժողովրդի թշնամին՝ այդ մրցկիսատական՝ բուխարինական ֆաշիստական ստոր գործակալն ե , լրտեսը , վնասաբարը : Ինչպես կարելի յե հապա այլպես անվանել դյուզի բոլոր աշխատառողներին , վորոնք թեկուղ սիսալ ել կատարած լինեն , այնուամենայնիվ ճնշող մեծամասությամբ մեր մարդիկն են , կուսակցության ու խորհրդային լրանությունը նվիրված մարդիկ : Այդ մեծ սիսալ ե : Գյուղթղթակիցը միշտ պետք է հիշի սիսական կամ սրատահաբար սիսալ գործած ընկերոջ քննադատության և խորհրդական թշնամու մերկացման միջն յեզած տարբերությունը : Թըշնամուն վոչ մի խնայում , իսկ մեր , խորհրդային մարդուն պետք է ոգնել քննադատության միջոցով՝ ուղղելու սիսալ :

Իսկ առհասարակ հարկավոր և գիտենալ , վոր քննադատությունը մեզ անհրաժեշտ ե վո՛չ ինքնըստինքյան և վո՛չ գեղեցիկ խոսքերի համար : Մեզ հարկավոր չե այնպիսի «քննադատություն» վորը դալիս և թշնամու սահմանից : Յերբեք չպետք է ժողովրդ բնկեր Ստալինի այն ցուցումը , վոր իսկական բոլշեիկյան ինքնագնադատության նպատակն ե .

«Արմատավորել կուսակցականությունը , ամրապնդել խորհրդային իշխանությունը , բարելավել մեր շինարարությունը , ամրացնել մեր անտեսական կագրերը , զինել բանվոր գառակարգին» («Բնագեմ իշնաքննադատության լազունդի գուհկացման» Հողվածից՝ «Պրավդա» թերթ , 28- հունիսի , 1928 թիվ :

Յեթի դյուզթղթակիցը միշտ ղեկավարվի ժողովուրդների առաջնորդի այս հիանալի ցուցումով , նա կդանի ճիշտ առ գննադատական յուրաքանչյուր թղթակցության համար :

ԽՄԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԵԼ ԳՐԵԼ ՊԱՐԶ

Վորուշ դյուզթղթակիցներ չգիտենք թե ինչու կարծում են , վոր յեթի թղթակցությունը պարզ և գրված , այդ կլինի վատ թղթակցություն : Նրանք դիմում են զանազան հնարամառթյունների , զործ են ածում հաճախ իրենց համար ել բոլորովին անհամանալի ստոր բառեր , աշխատում են գրել վորիմաստ կերպով :

Դրա հետևանքով նրանց թղթակցությունները յերբեմն լինում են կամ ընթերցողների համար բոլորովին անհամանալի կամ թե ընդունում են ըոլորովին այլ իմաստ , քան մտածել երինքը՝ դյուզթղթակիցը :

Այդ բոլորովին ել բանի պետք չե : Գետք և աշխատել գրել այնպես , վորպեսզի թղթակցության մեջ ամեն բան ժիանգամայն հասկանալի լինի , վորպեսզի նու հասկացվի միայն մեկ իմաստով և ընթերցողին ասի միայն այն , ինչ ուզեցել ե նրան ասել հեղինակը : Թղթակցությունը դրելիս հարկավոր և ստուգել նրա յուրաքանչյուր Փրազը հենց այդ տեսակետից – թե չկա պարզոք նրա մեջ վորեե անհամանալի կամ տարակումելի բան :

Վորքան ավելի հասարակ , ավելի պարզ և գրված թղթակցությունը , վորքան ընթերցողն ամելի հեշտությամբ ըմբռնի այն , այնքան ամելի լավ :

«Գրեցեք , — խորհուրդ եր տալիս Ավելքսեյ Մաքսիմովիչ Գորկին , — հիշելով , վոր պարզը ամենալժվարն ե և իմաստունը» (Ա. Մ. Գորկու՝ ժուռանակատ Մաքսիմովին դրած նամակից :

ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՍՏՈՒԳԵԼ ԱՍԵՆ ԻՆՉ

Թղթակցությունը գրված ե : Ի՞նչ անել այնուհետեւ : Անպարմանորեն խնամքով , ուշադիր կարդալ ամրողը , ճշությունն առուղելու համար կարգալ յերկու կամ յերեք անգամ : Տեսեք , թղթակցության մեջ չկա^o արդյոք վորեե ավելորդ բան , կամ ընդհակառակը գուցե վորեե բան պակասում ե : Յեկ զրան համապատասխան արեք անհրաժեշտ , կրծատումներ կամ լրացումներ :

Այսուհետեւ, պետք եւ ամենառւշադիր կերպով թղթակցության տեխնոլոգիան համեմատել իր նշումների և յեղած բոլոր նյութերի հետ։ Ավելի լավ ե մի քանի անդամ ստուգել դրված յուրաքանչյուր ֆրազը և թղթակցության վրա ծախսել մի փոքր պեղի ժամանակ, քան թե թույլ տալ թեկուղ փոքր սիսալ։ Հասուկ ուշադրությամբ պետք ե ստուգել, իր նշումների ու փաստթղթերի հետ համեմատել թղթակցության մեջ հանդիպող պղպանումները, անունները, տեղերի, մեքենաների անունները, թվերը, ամսաթվերը, ամիսները, տարեթվերը։

Այդ բոլորից հետո պետք ե մեկ անդամ ևս կարգալ թղթթակցությունը և դուրս չպատճել ավելորդ բառերը, անհաջող արտահայտությունները փոխարինել այլ արտահայտություններով, «սղոցել» չափից դուրս յերկար ֆրազները։ Այն մասին, թե ինչպես ուղղել թղթակցությունները, մանրամասն պատմված և հասուկ դասախոսության մեջ, վորն ուղարկվում է հեռակայողներին։

Յեթե այդ բոլորից հետո գյուղթղթակիցը համոզվում է, վոր իր թղթակցությունն անկասկած ճշմարիտ ե, վոր նրա մեջ չկա վարել անձտություն, վոր թղթակցության մեջ դրված ամեն բան կիլինի հասկանալի, — նա կարող է թղթակցությունն ազարկել խմբագրությանը։ Միայն թե չմոռանուք սոցրազրել ձեր լրիվ անունը, հայրանունն ու ազգանունը և մատնանշել ձեր ստույդ հասցեն։

ՊԱՅՔԱՐԵԼ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղթղթակիցն իր թղթակցությունն ուղարկել ե տպագիր թերթի խմբագրությանը կամ թե այն հանձնել ե պատի թերթի խմբովին։ Դրանով վերջացա՞վ արդյոք հոգատարությունը թղթակցության մասին։ Վո՞չ, չպետք ե վերջանա։

Լավ գյուղթղթակիցը գրում ե վոչ թե նրա համար, վոր հենց այնպես՝ դրի, վոր նրա ազգանունը հայտնի լինի խմբագրությանը կամ ընթերցողներին։ Մամուլում կատարած իր աշխատանքին նա նայում է վորպես հասարակական մեծ նշանակություն ունեցող գործ։ Ուստի, գրելով թղթակցությունը և առաջ այն խմբագրությանը, նա պետք է համարի, վոր արել և գենես գործի կեսը միայն։

Յեթե թղթակցությունը տպագրված ե պատի կամ տպագիր թերթում, անհրաժեշտ ե, վոր գյուղթղթակիցը հետևի նրա

գործությանը, այսինքն պարզի, թե ի՞նչ միջոցներ են ձեռք տանըված թղթակցության առթիվ և հասնի այն բանին, վորպեսզի պհանջաժեշտ միջոցներն իսկամբեն ձեռք առնվեն։

Զգետք ե գործունությունը հասկանալ չափից դուրս նեղ։ Բանը վերջին հաշվով միայն, և վոչ այնքան նրանումն ե, վոր թերությունների համար հանցալորներ պատժեն, այլ գլխավորապես նրանումն ե, վոր սաեղջմի այնպիսի կարգ, վոր հետապայտում բացառի այդպիսի թերությունների կրկնման բուն հարավորությունը։

Իբրավացի չեն այն գյուղթղթակիցները, վորոնք կարծում են, թե հարկավոր ե արդյունքների հասնել միայն մերկացնող թղթակցությունների առթիվ։ Գյուղթղթակիցը պետք ե հետաքրքրվի նաև այն թղթակցությունների արդյունքներով, վորուել նկարագրված են յեղել վորեւ բրդպաղի լավ փորձը կամ նվաճումները։ Նա պետք ե պարզի, թե ով ե ընդորինակում այդ լավ փորձը և հասնի այն բանին, վոր լավ փորձն ընդորինակիվ ըստ հարավորության բոլոր կողմնառեսականների կողմէ։

Յօւբաքանչյուր թղթակցության արդյունքների մասին լավ կինի հաղորդել խմբագրությանը։ Յեկ բոլորովին ել վատ չի կինի, յեթե գյուղթղթակիցը մերկացնելով վորեւ անկանոնություն, վորու ժամանակից հետո մի թղթակցություն դրի այն ժամին, թե այդ անկանոնություններն ինչպես են վերացվել և աշխատանքն ինչպես ե կանոնավորվել նոր ձևով։ Յեթե թղթակցությունը հարի յեղած ազդեցությունը չի ունենում, պետք ե դրեւ խմբագրությանը նաև այդ մասին։

Յեթե գյուղթղթակիցը խմբագրությունից հաղորդագրություն ե ստանում, վոր իր թղթակցությունն ուղարկված և քննության, նա կարող է տեղում հատաքրքրվել, թե թղթակցությունն ի՞րոք քննվում ե, և անհրաժեշտության դեպքում համապատասխան կազմակերպություններին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ։ Քննության արդյունքների մասին պետք ե այդ դեպքում ևս հաղորդել խմբագրությանը։

Հնարավոր ե նաև այսպիսի դեմք, վոր խմբագրությանը չի բավարարում գյուղթղթակիցի ուղարկած թղթակցությունը և թերթը հրաժարված ե այն տպագրել։ Այդ ժամանակ գյուղթղթակիցը իրավունք ունի պահանջել, վորպեսզի խմբագրությունը նրան բացարի իր թղթակցության թերությունները,

նաև այն, թէ ինչպես եր հարկավոր զրել թղթակցությունը։
Գրանով գյուղթղթակիցը կովորի և հարավորություն կատա-
նա հետագայում զրելու ավելի լավ։ Իսկ լավագույն աշխատան-
քի, թե՛ կոլտնտեսային արտադրության մեջ և թ՛ե մտմուլում,
գյուղթղթակիցը պետք է ձգտի մշտագես։

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՑԵՔ ԲԱՆԱԳՈՐ, ԶԵՐ
ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ ՍՏՈՒԳԻՑԵՔ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՅԱՎ,

1. Ի՞նչ է նշանակում զրել ճշմարտացի։
2. Ի՞նչ բան է թղթակցության թեման։ Ինչպես այն լո-
տույց կերպով ճշոել։
3. Նշեցեք այն թեմաները, վորոնք ամենից ավելի կարևոր
են ներկայումս ձեր կոլտնտեսության համար, ճշտեցեք գրանք։
4. Ինչպես պետք է հավաքել և ստուգել թղթակցության
նյութը։
5. Ի՞նչպես սպավել գյուղթղթակցի հուշատեսրից։
6. Մի՞շտ արդյուք անհրաժեշտ է սպառազործել հավաքած
ամբողջ նյութը։ Ինչպես կատարել այդ նյութի ընտրությունը։
7. Ի՞նչ բան է թղթակցության պլանը։ Ի՞նչ է կոնսպեկտը։
8. Ի՞նչ հիմնական հարցերի պետք է պատասխանի յուրա-
քանչյուր թղթակցություն։
9. Ի՞նչպիսին պետք է լինի գյուղթղթակցային քննադատու-
թյունը։
10. Ի՞նչ է թղթակցության գործունությունը։ Ինչպես
հաօնել այդ բանին։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Բնորեցեք թղթակցության թեմա ձեր պատի թերթի
հերթական համարի համար, ճշտեցեք այն։ Նշեցեք այն հարցերի
ցուցակը, վորոնք անհրաժեշտ են պարզել ավլալ թղթակցու-
թյան վրա աշխատելիս։
2. Կազմեցեք պլան և այդ պլանով գրեցեք թղթակցու-
թյուն։
3. Պահեցեք ձեզ համար հուշատետքեր, նշումներ կատարեք
նըստում ամեն որ և մեկ ամիս հետո ներկայացրեք կոնոսւլտա-
ցիայի զեկավարին, ստուգման համար։



3 МАЯ 1939

ՏՐՎՈՒՄ Ե ԶՐԻ

222

11

28356